

Արմինե ԲՐՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

## ՇԱՄԱՆԻՉՄԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ Թ. ՀՅՈՒՋԻ ԵՎ Թ. ԹՐԱՆՍԹՐՈՄԵՐԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Շամանիզմի տեսությունը առավել ընդգրկուն ուսումնասիրության արժանացավ XX դարում Միրզա Էլիադեի կողմից, ում շնորհիվ պոետները իրենց պոետական տեսիլքի հանգուցալուծումը գտան շամանիզմի ապաքինման գործընթացում: Հենց այս կերպ են արտահայտում իրենց ներքին հոգեբանական լուծումներն ու աշխարհայացքը ստեղծագործող-շամաններ համարվող պոետներ անգլիացի Թ. Հյուզն ու շվեդ Թ. Թրանսթրոմերը: Նրանց համար շամանիզմը հոգեկան բավարարվածության հասնելու մի միջոց է, որն էլ նրանց հնարավորություն է տալիս կերտելու հեղափոխական բանաստեղծական երկեր: Շամանիզմի մեջ կիրառվող կենդանական սիմվոլներն ու բոլոր ապրիբուրները կարելի է գտնել վերը նշված երկու պոետների բանաստեղծական տարբեր ժողովածուներում:

**Բանալի բառեր.** Շաման, շամանիզմ, աշխարհայացք, ապաքինում, պոետական տեսիլք, շամանական տրանս, կյանքի ծառ, ոգիներ

XX դարասկզբին ազգագրագետների համար խորթ էր կամ էլ ոչ ճշգրտորեն էր օգտագործվում շաման, կախարդ, մոգ, վիուկ և այլ հասկացությունները, քանի որ բավականին բարդ էր բացահայտել այդ աշխարհայացքի տեր մարդկանց, որոնք իրենց մեջ կրում են մոգական և կրոնական ուժեր: Հետագայում այդ տերմինները լայնորեն իրենց տարածումը գտան «քաղաքակիրթ» ծոզովորդների կրոնական պատմության հետազոտություններում: Սակայն որոշ ազգագրագետներ այն դուրս են, որ դեռևս հին հնդկական, իրանական, գերմանական, չինական և անգամ բաբելոնյան շամանիզմի հնարներ են եղել, որոնք սակայն միայն լավագույնս ուսումնասիրվել են XX դարում: Սակայն պետք է ավելացնել, որ չնայած շամանը բավականին նույնացվում է մոգի և կախարդի հետ, այնուամենայնիվ շամանը և շամանիզմը առանձին ուսումնասիրության առարկաներ են: Ցանկալի է, որ շաման և շամանիզմ բառերը սահմանափակվեն իրենց իմաստներով, սակայն միևնույն է շամանը բավականին մոտ է կանգնած մոգին և հեքիմին. չէ որ նա և՛ բուժում է, և՛ իրագործում է հրաշք: Շամանը նաև հանդիսանում է հոգիներին կառավարող, հաճախ նրան վերագրվում են նաև քրմի, պոետի և միստիկի հատկանիշները: «Շամանիզմը» իր բուն էությանը ծագել է սիբիրյան և կենտրոնական Ասիայի կրոնական դրսևորումներից:

Արկտիկական գոտում շամանական հմայությունը (էկստազը) հանդիսանում է ինքնաբուխ և սահմանափակ երևույթ, և միայն այս ոլորտում կարող է խոսվել «մեծ շամանության» մասին, այսինքն՝ այն արարողության մասին, որը ավարտվում է իսկական կատալեպտիկական տրանսով, որի ժամանակ էլ հոգին, ինչպես ընդունված է համարել, հեռանում է մարմնից, և ճանապարհորդում է դեպի երկինք կամ էլ դժոխք: Սուբարկտիկական շրջաններում շամանը՝ արդեն ոչ որպես զոհ տիեզերական ազդեցությանը, չի հասնում իրական ինքնաբուխ տրանսին և ստիպված է թմրամիջոցների կամ դրամատիկական խաղերի՝ «հոգու ճամփորդության» միջոցով կիսատրանս ուժերի կանչել:

Շամանական վիճակին հասնելու համար բնորոշ միջոցներ են հանդիսանում հիվանդությունները, երազները, զմայլանքները, որոնք պաթոգեն երևույթներ են: Երբեմն այդ եզակի հոգեվիճակները վերագրվում են նրան, ինչը համարվում է «ընտրյալ» վերևից, և ծառայում է միայն շամանի համար նոր բացահայտումներ կատարելու միջոց: Բայց ամենից հաճախ հիվանդությունները, երազները կամ զմայլանքները իրենք իրենցով իսկ կազմում են նվիրում, այսինքն՝ սովորական մարդուն վերածում են շամանի, ով էլ ծառայում է ծիսականին:

Հաճախ շամանի կամ հեքիմի վարքագծի դրսևորումները էպիլեպսիայի և հոգեկան հիվանդությունների ձևով դիտվում է որպես դիմացինին բուժելու և օգնելու միջոց:

Եվ այսպես, շամանության մեջ կարևորը բուժումն է, ինքնատիրապետումը, հավասարակշռությունը, որոնց էլ հնարավոր է լինում հասնել միայն շամանական պրակտիկայով զբաղվելուց հետո:

Իհարկե նման էկստատիկ վիճակից հետո միշտ և ամենուր սկսնակ շամանը և՛ տեսական, և՛ գործնական ուսուցման է անցնում փորձառու վարպետների մոտ: Եվ միևնույն է հենց այդ հոգեվիճակն է համարվում որոշիչ գործոն, որը և արմատապես և կտրուկ փոփոխության է ենթարկում «ընտրյալ» անձի կրոնական կարգավիճակը:

Գերագույն երկնային մարմնի կատարած դերը, որն առաջանում է անդրհմայական տարածության մեջ, կամ էլ հակառակը, մահացած շամանների ոգիների կամ դևերին վերագրվող իմաստներում, կախված է տարբեր կողմնորոշումներից: Հնարավոր է, որ այդ կողմնորոշումները պայմանավորված են տարբեր կամ էլ անզամ իրար հակառակ կրոնական հասկացություններով: Այսպես թե այնպես՝ նրանք վկայում են երկարատև էվոլյուցիայի մասին, և անկասկած, պատմության մասին, որը այս փուլի ուսումնասիրության ժամանակ կարող է ուրվագծել միայն վարկածների ձևով:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ազգի շամանական տեխնիկական բավականին տարբեր է ծեսերի և արարողությունների առումով: Յուրաքանչյուր ազգ ունի իր շամանական հագուստը, իր շամանական առարկաները, որոնցով էլ կատարվում են հմայությունները: Սակայն կան մի

քանի առարկաներ, որոնք ընդհանուր են բոլոր շամանական տեխնիկայի տիրապետողների համար, և բավականին կարևոր են այդ ակտերի կատարման գործում: Այդ պարագաներից են հայելիները, դիմակները, ոսկորները (կենդանիների), կմախքները, դափերը /M. Элиаде, 1998: 54/:

Շամանները այդ տրանսը կատարելու համար շատ հաճախ են օգտվում կենդանիներից, հատկապես ձիերից և եղնիկներից, որոնք հիմնականում համարվում են խորհրդանշական կենդանիներ: Ահա այստեղ էլ դրսևորվում է անհմալիստական ֆենոմենը, որը և առկա է նաև XX դարի անգլիացի պոետ Հյուզի և Նոբելյան մրցանակակիր շվեդ պոետ Թոմաս Թրանսթրոմերի պոեզիայում: Շամանները օգտվում էին դափերից, որոնք և համարվում էին շամանների «ձիերը»: Դափի և շամանի հագուստների վրա հիմնականում պատկերված է լինում կյանքի ծառը՝ կենդանիներով և թռչուններով զարդարված, որոնց օգնությանն էլ դիմում էր շամանը, որպեսզի թափառեր ողջ տիեզերքում: Կյանքի ծառը շամանի համար պատուհան է բացում դեպի ողջ աշխարհ: Շամանիզմի տեսությանն առավել մոտ է կանգնած Հյուզի «Վոդվո» բանաստեղծական ժողովածուն: «Վոդվո» բանաստեղծական ժողովածուի համանուն բանաստեղծությունն ընթերցելիս Հյուզի հոետորական հարցերը հուզում են նաև ընթերցողին, և դա է, որ Հյուզին և ընթերցողին միավորում է, և ստեղծագործությունը ստանում է համամարդկային նշանակություն:

Ի՞նչ եմ ես? Այս վայրը ատելով, թողնում եմ տերեւները  
Գետի եզրին, հետևում եմ օդում աննշան բծերին, որոնք գետեզրին են.  
Ես մտնում եմ ջուր: Ու՛մ հետ պիտի կիսեմ  
Բաժակով ջուրը, ինչպես նաև մահճակալը, որ վերևում եմ տեսնում.  
Ինձ համար գետի հունը շատ պարզ է  
Ի՞նչ եմ անում այստեղ կեսօրին: Ինչու՞ եմ համարում, որ  
այս գորտը հետաքրքիր է, քանի որ կասկածում եմ, որ  
նրա ներքին գաղտնիքն իմ սեփականն է: Արդյո՞ք այս սևազգեստները  
Ինձ ճանաչում են և  
Տեսե՞լ ենք իրար նախկինում և արդյոք համապատասխան եմ իրենց  
աշխարհին:  
Ինձ թվում է, թե  
Ես կտրված եմ գետնից, բայց ոչ արմատից, սակայն զգում եմ.  
առանց միջադեպի .եւ չունեմ ոչ մի հարց:  
Ամրանալով այն ամենին, ինչի միջոցով կարող եմ գնալ առաջ,  
Ինձ, կարծես, ազատություն են տվել  
այս տեղանքի. ուրեմն, ի՞նչ եմ ես (թարգմ.՝ Ա.Բրյանի) (Hughes, 1982: 87):

«Վոդվո»-ում Հյուզը փորձում է ոչ միայն ոգեկոչել էակներին, այլև նրանց շարժող էներգիան: «Նվագարկումներ պարկապզուկի համար» (“Pibroch”) և «Գայլերի ոռնոցը» (“The Howling of Wolves”) բանաստեղծու-

թյունները խաղում են էության հետ՝ ֆենոմենալ դետալները թողնելով ընթերցողի երևակայությանը:

«Փիբրոչ»

Միանման վարվելով ապրողի հետ, մեռնողի,  
Ծովը կանչում է ճիչով՝ անիմաստ ու միալար,  
Հավանաբար երկնքի հայտնությունից խիստ հոգնած,  
Նա արթուն է մնացել, բյուր գիշերներ սուկահար,  
Չի ունեցել նպատակ և չի եղել ինքնախար:  
Քարը նման է նրան: Խճաքարի պես  
Բանտված, ոչինչ չկա աշխարհում:  
Ստեղծվել է, որ քնի կամ էլ հանկարծ գիտակցի,  
Որ միջուկը արևի  
Էմբրիոնն է Արարչի:  
Նրա վրա՝ պիրկ քամի,  
Որ կարող է քարի պես  
Ձուլվել միայն ոչնչին:

(թարգմ. Ա. Հարությունյան) (Ա. Հարությունյան: 2000: 570)

«Վողվո» ժողովածուի պատմություններում պատմվող ծեսերն ու իրադարձությունները, անշուշտ, նման են շամանական ծեսերին: Այստեղ ևս շաման է ընտրվում, ով պետք է անցնի բարդ հոգեվիճակային ծեսի միջով, որի շնորհիվ պիտի դեմ առ դեմ կանգնի այն հոգու առջև, ով նրան նոր աշխարհներ պիտի բացահայտի: Ըստ Հյուզի, շամանը մի օր կանչ է լսում և «նա կամ պիտի շաման դառնա, կամ էլ մեռնի» /Hughes, 1994: 58/: Իսկ ահա ըստ Թոմաս Թրանսթրոմերի՝ շամանը միջոց է ներթափանցելու մարդկանց մեջ, նրանց ներաշխարհի և նրանց աշխարհընկալման մեջ: Թրանսթրոմերի «Արահետներ» բանաստեղծական ժողովածուն արժարժում է փնտրտուքի և այլոց ներաշխարհի թափանցելու գաղափարները, ընդ որում, ինչպես Հյուզի մոտ այնպես էլ Թրանսթրոմերի մոտ նկատում ենք ոչ միայն հոգեկան, այլ նաև ֆիզիկական բավարարվածության պահանջ, որը տրվում է փնտրտուքի միջոցով: Թրանսթրոմերի այս ժողովածուի «Առաջապահ ուղեկալ» բանաստեղծության մեջ հանդիպում ենք և կենդանական կերպին՝ օձի տեսքով, որը շատ հաճախ հայտնվում է Հյուզի պոեզիայում, և շամանին, ով սկսում է թռչել և միաձուլվել կանացի մարմնին:

Վրանում գաղջ օդն է գերակշռում. մի մեծ օձ,  
Որը այրող թույն և ֆշոցներ է կուլ տվել.  
Գարնանային գիշերը միանգամայն լուռ է.  
Եվ սպասում է բացվող օրվան սառը քարերի մեջ:  
Դրսի սառնության մեջ ես սկսում եմ ճախրել,  
Ինչպես շամանը. ճախրում եմ դեպի նրա մարմինը,  
Բիկինիի շրջանում սպիտակ գծեր կան.

Մենք դրսում՝ արևի տակ էինք: Մամուռը տաք էր:

Ես թռչում էի ջերմ պահերի վրայով,  
Սակայն երկար չկարողացա մնալ.  
Նրանք սուլում էին իմ հետևից.

Ես քարերի միջից դուրս սողացի: Այստեղ եմ և հիմա:

Առաքելությունս է լինել այնտեղ, որտեղ պետք է լինեմ:

(Transtromer, 2006: 116) (թարգմ.՝ Ա.Բոյան)

Ազատության գաղափարը, որն այստեղ առաջ է քաշում Թրանսթրոմերը, հատուկ է շամանին, ով կարողանում է տրանսի միջոցով ճախրել և լինել այն վայրերում, որտեղ իր առաքելությունը պիտի ինքը իրականացնի: Ըստ Թրանսթրոմերի շամանն այստեղ հանդես է գալիս որպես մարգարե, ով ունի իր առաքելությունը մարդկության առաջ, սակայն հանդես է գալիս օձի լռակյաց կերպարի ներքո: Նա չի ֆշաջնում, քանի դեռ ժամանակը չէ, նա ծպտված է ամայի մի վայրում, սակայն իր ճիշտ ժամանակին կպոթոկա:

Իսկ ահա Հյուզի «Վողվո» բանաստեղծության մեջ նկատում ենք, որ նա ունի բազմաթիվ հարցադրումներ կապված իր էության հետ, ով շամանի նման կարողանում է ճախրել օդում, սակայն չի գիտակցում, թե ինքը որտեղից է գալիս և ուր պիտի գնա: Բայց մի բան հստակ է. նրան տրվել է ներքին ստեղծագործական ազատություն:

Հստակ կերպով նկատում ենք, որ սևազգեստ մարդիկ այս բանաստեղծության մեջ հոգիներ են, ովքեր փորձում են Հյուզի հետ հարցադրումների մեջ մտնել: Հյուզը այստեղ բնության երևույթների միջոցով ներկայացնում է շամանին, ով առանց վախենալու ջուրն է մտնում և ուսումնասիրում ամեն բան, ինչ թվում է անքննելի, անգամ գորտը, գետի հունը, ապակե բաժակը և այլն:

Նույն բանն է կատարվում այդ ժողովածուի առաջին պատմվածքում՝ «Անձրևաձի» («The Rain Horse»), որտեղ տղամարդը հետապնդվում է ձիու կողմից և վախից ու բռնությունից է փախչում: Մեկ այլ պատմվածքում՝ «Բերքահավաք» («The Harvesting») ագարակատերը սպանում է ճագարին, սակայն հենց ինքն է վերածվում այդ վիրավոր և մեռնող կենդանուն: «Վերք» («The Wound») պատմվածքում պատմվում է պատերազմում վիրավորված զինվորի մտավոր ճանապարհորդության մասին: Այստեղ կատարվում է նույն գործընթացը, ինչը տեղի է ունենում շամանների հետ. հոգին անջատվում է մարմնից ուժեղ ֆիզիկական ցավի պատճառով: Համբարձման ինիցիացիան ապագա շամանին թռչելու հնարավորություն է տալիս: Եվ ընդհանրապես, աշխարհում ընդունված է, որ կախարդներն ու շամանները կարողանում են թռչել, և ակնթարթում հաղթահարում են մեծ տարածություններ և երբեմն էլ դառ-

նում են անտեսանելի: Դժվար է որոշել, արդյոք բոլոր մոգերն են կարողանում ապրել զմայլվածության զգացումը այդ դասընթացի ժամանակ, թե դա պարզապես ծիսակարգ է համբարձման ձևով. այսինքն արդյոք նրանք գտել են թռչելու կախարդական ունակությունը արարողակարգի կամ զմայլվածության ապրումի ժամանակ, որը դարձել է նրանց շաման դառնալու վկայությունը: Կարելի է թույլատրել, որ նրանց առնվազն որոշ մասը, ըստ ըության, ստանա այդ շամանի կոչումը: Շատ զեկույցներում վկայակոչվում է շամանների և կախարդների թռչելու փաստը, սակայն չի նշվում այդ ունակությունը ստանալու միջոցը, և շատ հավանական է, որ այդ լուսկյացությունը բացատրվում է շատ աղբյուրների ոչ ճշգրիտ լինելու պատճառով: Չնայած այս ամենին, շամանական կոչման և արարողության շատ դեպքերը հիմնականում և ուղղակիորեն կապված են համբարձման հետ: Ինչպես տեսնում ենք երկինք համբարձվելը հիմնարար դեր է խաղում շամանական արարողակարգում: Ծառերի կամ սյան վրա մագլցելու ծեսերը, համբարձման առասպելները և մոգական թռիչքը, հմայության համբարձման փորձը, առեղծվածային թռիչքները դեպի երկինք և այլն, այս բոլոր տարրերը կատարում են որոշիչ ֆունկցիա շամանական կոչումներում և արարողություններում: Երբեմն այդ պրակտիկայի և կրոնական գաղափարների շարքը թվում է կապված են հին ժամանակների առասպելների հետ, երբ կապը երկնքի և երկրի միջև բավականին հեշտ է եղել: Այս տեսակետից շամանական ապրումները համարժեք են այդ առաջնային առասպելական ժամանակների վերադարձին, իսկ շամանը ներկայացված է որպես արտոնյալ անձ, ով ձեռք է բերում իր համար մարդկության երջանիկ կարողությունը առասպելական ժամանակներից:

Այս բոլոր ստեղծագործություններն էլ կապված են շամանական տրանսի հետ և ամբողջությամբ այդ գործընթացների արտահայտություններն են իրենց տարբեր դրսևորումներում:

Հյուզը և Թրանսթրոմերը բավականին տպավորված են եղել Միրչեա Էլիադեի «Շամանիզմի տեսության» ուսումնասիրությամբ, և հատկապես մեծ է եղել պոետների զարմանքը ոչ թե Էլիադեի «կրոնի», այլ հմայության վիճակում հոգևոր տարբեր ոլորտների միջև տեղի ունեցող շարժման տեխնիկայի նկարագրության վրա, հատկապես հոգիների և ոգիների միջև, ռեալ իրականության մեջ, պրակտիկ ճգնաժամի պայմաններում:

Հյուզը շամանի վարպետությունն արտահայտել է հետևյալ կերպ. «Շամանն ընտրվում է մի քանի հնարքներով. որոշ շրջաններում, հիմնականում հյուսիսամերիկյան հնդկացիների մեջ, թեկնածուն անցնում է անսովոր արարողությունների միջով՝ կա՛մ ենթարկվում է ինքնախարազանման, կա՛մ ծոմ է պահում այնքան ժամանակ, քանի դեռ հոգին (հիմնականում որևէ կենդանու) չի ներկայացել՝ դառնալով աշխարհի հետ իր կապը» (Ա. Եգանյան, 2010: 93):

Հարկ է նշել, որ վերոնշյալ շամանական ապաքինման գաղափարներն են հենց դրված այս երկու պոետների ստեղծագործությունների հիմքում: Նրանք շամանական գաղափարների և ասորիբուտների միջոցով ներկայացնում են յուրաքանչյուրն իր պոետական տեսիլքը: Հյուզի համար իր պոետական տեսիլքը սիրո կորստի, տագնապի և մահվան դեմ դուրս գալու գաղափարների շուրջ է, իսկ Թրանսթրոմերի մոտ հանդիպում ենք մահվան հանդեպ վախի ապաքինող էֆֆեկտին: Այս երկու պոետներն էլ հենց իրենց ստեղծագործող-շաման են համարում զուտ այն պատճառով, որ կարողանում են իրենց ստեղծագործությունների միջոցով հոգիների հետ խոսել, շփվել և ընկնել շամանական տրանսի մեջ: Նրանց համար գոյություն ունի ներքին հոգեբանական այլընտրանքային բուժում՝ շամանիզմը, որը մեծապես արտահայտված է նրանց բազմաթիվ բանաստեղծական ժողովածուներում:

Ինչպես մենք նկատում ենք, ապագա շամանի հակումը կարող է կանխորոշված լինել երազներում, հմայության մեջ կամ էլ հիվանդության ժամանակ, որի ընթացքում հնարավոր է հանդիպում կիսագերբնական արարածների հետ՝ նախապապերի հոգիների, կենդանիների հոգիների հետ, կամ էլ անսովոր երևույթների արդյունքում. օրինակ՝ կայծակի հարված, դժբախտ պատահար և այլն: Սովորաբար այդ հանդիպումը սկիզբ է դնում շամանի և «հոգիների» միջև «սերտ բարեկամության», որն էլ շամանի կարիերայի կանխատեսողն է:

Անիմալիստական կերպարները և տոտեմները, շամանության կարևոր խորհրդանիշները ամենագլխավոր դերն են զբաղեցնում Թեդ Հյուզի և Թոմաս Թրանսթրոմերի պոեզիայում: Չնայած բանաստեղծներին դարեր է բաժանում առասպելականությունից, սակայն նրանք անդադար ձգտում են դեպի իրենց անհատական միջը, առեղծվածը, շամանականը: Անիմալիստական կերպարների միջոցով բանաստեղծներն անընդհատ արտահայտում են մարդու բնականությունը, բնազդներն ու պահանջները և անվերջ բնությանն են ձգտում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hughes T. New Selected Poems. New York: Harper and Row, 1982.
2. Hughes T. Winter Polen: Occasional Prose: William Seammell. New York: Picador, 1994.
3. Transtromer T. The Great Enigma: New Collected Poems. UK: Bloodaxe Books Ltd., 2006.
4. Элиаде М. Шаманизм: Архаические техники экстаза. Москва: София, 1998.
5. Հարությունյան Ա. Ընտրանի ամերիկյան և անգլիական պոեզիայի, Երևան, «Ապոլլոն» հրատ., 2000:

6. Եգանյան Ա. Մարդկայինի որոնումը կենդանակերպի աշխարհում (Թեղ Հյուզ), Երևան, 2010:

**А. БРЯН – Трансформация и проявление теории шаманизма в поэзии Теда Хьюза и Томаса Транстромера.** – Теория шаманизма, тщательно изученная культурологом Мирче Элиаде, создала возможность для поэтов нового мифотворчества найти посредством шаманического исцеления объяснение своих поэтических видений. Именно таким образом психологические и личностные проблемы разрешаются у двух известных поэтов – Т. Хьюза и Т. Транстромера. Для них шаманистический транс является своеобразной формой творчества. В поэзии этих авторов часто встречаются животные символы и шаманистическая атрибутика.

**Ключевые слова:** шаман, шаманизм, мировоззрение, исцеление, поэтическое видение, шаманский транс, дерево жизни, духи

**A. BRYAN – Transformation of Shamanism and its Usage in T. Hughes and T. Tranströmer's Poetry.** – The theory of Shamanism thoroughly explored by the culturologist Mircea Elide provided the poets with the opportunity of new mythological design, where through shamanistic healing they could envisage there poetical revelations. Two prominent writers Ted Hughes and Tomas Tranströmer apply this method (shamanic healing) to resolve their own psychological and personal controversies. They view shamanistic trans as an exclusive form of creative art. We can often encounter animalistic symbols and shamanistic artifacts in their poetry.

**Key words:** shaman, shamanism, worldview, healing, poetic vision, shamanic trance, tree of life, spirits